# ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

## «ԷՋՄԻԱԾԻՆ» Կրոնագիտական - հայագիտական հանդես

Արդի ժամանակաշրջանում տեղեկատվական տեխնոլոգիաների եւ համակարգերի բուռն զարգացումը նոր մարտահրավերներ ու խնդիրներ է դնում նաեւ հայագիտության առջեւ: Միաժամանակ տեղեկատվական համակարգերի կատարելագործումը հայագիտական-կրոնագիտական հետազոտական տարբեր կենտրոնների սերտ համագործակցության հնարավորություն է ստեղծում:

«Էջմիածին» հայագիտական-կրոնագիտական բազմալեզու հանդեսը խնդիր ունի նախ եւ առաջ նպաստելու հայագիտական եւ կրոնագիտական տարբեր կենտրոններում ու ոլորտներում աշխատող մասնագետների հետազոտությունների արդյունքները համատեղ ներկայացնելու: Ընդ որում, հանդեսի հիմնական նպատակներից մեկն է նաեւ լուսաբանել կրոնագիտության եւ հայագիտության միջեւ առկա հնարավոր առնչակցություններն ու աղերսման եզրերը: Անշուշտ, այդ իմաստով հաշվի պետք է առնվեն թե՛ Հայաստանում դեռեւս խորհրդային ժամանակներից եկող եւ արդեն գիտական որոշակի ավանդույթ ձեւավորած ձեռքբերումները եւ թե՛ արտերկրի տարբեր հայագիտական կենտրոններում կուտակված փորձը: Հանդեսը, ժամանակակից կրոնագիտական միտքը հավուր պատշաճի ներկայացնելու դիտավորությամբ, նպաստելու է նաեւ տարբեր հետազոտողների ուսումնասիրությունների հայերեն թարգմանություններին եւ դրանց քննարկմանը:

Հանդեսում լինելու են հայկական տարբեր գաղթօջախների եւ սփյուռքյան իրականության մեջ գործող մշակութային-կրթական հաստատությունների

առօրյան լուսաբանող հրապարակումներ, ինչպես նաեւ Մայր Աթոռում, ի մասնավորի Գեւորգյան հոգեւոր ճեմարանում տեղի ունեցող գիտամշակութային անցուդարձը ներկայացնող հոդվածներ: «Էջմիածին» հանդեսը լայնորեն բաց է աշխարհի տարբեր երկրներում գործող հայագետների, կրոնագետների, աստվածաբանների եւ այդ ոլորտներում գործող բոլոր հետազոտողների համար: Իբրեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտոնական օրգանի ավանդույթների ուղղակի ժառանգորդ՝ հանդեսը նաեւ պարտավորություն է ստանձնելու կրոնական, մշակութային, հասարակական տարբեր հարցերում մասնագիտական հրապարակումներով ներկայացնելու Հայ Եկեղեցու դիրքորոշումը:

Հանդեսն ունի նաեւ լրատվական, մատենախոսական-գրախոսական բաժիններ, հրապարակվող հոդվածները անհրաժեշտության դեպքում կուղեկցվեն լուսանկարներով: Հանդեսը հրապարակվելու է ամեն ամիս, հոդվածներն ընդունվելու են հայերեն, անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն եւ գերմաներեն լեզուներով (GHEA Grapalat, Times New Roman): Հայերեն հոդվածները կունենան անգլերեն եւ ռուսերեն, իսկ օտարալեզու հոդվածները՝ հայերեն ամփոփումներ:

## "ETCHMIADZIN"
## Religious-Armenological Review

In modern era, the development of information technologies and systems issues new challenges and problems in front of Armenological studies, as well. At the same time, the improvement of information systems creates a possibility for a close cooperation with different Armenological-religious research centers.

The task of "Etchmiadzin" multilingual Armenological-religious review is first of all to contribute to the joint presentation of research results of specialists working in different Armenological and religious spheres. Besides, one of the main goals of the review is to cover possible relations and links existing between religious and Armenological studies. Indeed, in this sense one should take into consideration both the achievements coming from the soviet times that have already shaped a certain scientific tradition in Armenia, and the experience gained in different Armenological centers in abroad. The review, with the intention of representing properly modern religious thoughts, will also contribute to the translation of different researchers' works into Armenian, and to their discussions.

The review will include publications covering the everyday life of cultural-educational institutions functioning in different Armenian communities and in Diaspora, as well as articles representing scientific-cultural events held in the Mother See of Holy Etchmiadzin and particularly, in Kevorkian Theological Seminary. "Etchmiadzin" review is widely open to all the researchers working in Armenological, religious, theological and other spheres in different countries of the world. As an immediate heir to traditions of an official organ of the Mother See of Holy Etchmiadzin, the review will also assume a responsibility to represent the standpoint of the Armenian Church on different religious, cultural, social issues with professional publications.

The review also has informative and literary sections; in case of necessity, published articles will be accompanied by photographs. The review will be published every month; articles will be admitted in Armenian, English, Russian, French and German languages (GHEA Grapalat, Times New Roman). Articles written in Armenian will have summaries in English and Russian, and articles written in foreign languages will have summaries in Armenian.